ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2024

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1

Ո՞վ է նշված խոսքերի հեղինակը.«Մարդն ավելի վատն է կենդանուց, երբ վերածվում է կենդանու».

1. Ռոբինդրանաթ Թագոր
2. Ի. Կանտ
3. Արիստոտել
4. Պլատոն

2

Նշվածներից ո՞րը ուղղման արդարության նպատակ չէ.

1. Զգոնության բարձրացում
2. Իրավիճակի ուղղում
3. Սխալ արարքի կանխատեսում
4. Սխալ արարքի կանխարգելում

3

Պնդումներից ո՞րն է սխալ.

1. 17-րդ դարի հոլանդացի իմաստասեր Բ. Սպինոզան հետևյալ ուշագրավ միտքն է արտահայտել.«Ազատ կանվանեմ նրան, ով ղեկավարվում է միայն գիտակցությամբ»
2. Ժողովրդավարական հասարակությունում առաջնորդությունը հասարակական ազդեցության գործընթաց է, որում անհատը կարողանում է համոզել կամ ազդել խմբին՝ որևէ համատեղ նպատակի հասնելու կամ հասարակական հիմնախնդիր լուծելու համար։
3. Արդարությունն ունի երկու «երես»՝ իրավական և բարոյական, որոնցից առաջինը կարգավորվում է օրենսդրությամբ, իսկ երկրորդը՝ հասարակական կյանքի այն կանոններով, որոնք անվանում են բարոյական նորմեր։
4. Իշխանությունների բաժանման գաղափարն առաջիններից մեկն արծարծել է նոր ժամանակների անգլիացի մտածող Ջոն Լոքն իր «Օրենքների ոգու շուրջը» աշխատության մեջ։

4

Նշված մտածողներից ո՞վ է գեղեցիկը դիտել օգտակարն ու նպատակահարմարը՝ նկատելով, որ իրենում օգուտ չպարունակողը չի կարող գեղեցիկ համարվել.

1. Արիստոտել
2. Սոկրատես
3. Պլատոն
4. Յոհան Վինկելման

5 **Միջնադարի հայ մեծ մտածող Դավիթ Անհաղթը արվեստները բաժանում էր երկու խմբի.**

1. Կրթող և դաստիարակող արվեստներ
2. Տարածական և ժամանակային արվեստներ
3. Օգտակար և անօգուտ արվեստներ
4. Հաճելի և տհաճ արվեստներ

6 **Արիստոտելը որպես գեղեցիկի բնագավառ դիտարկում է արվեստը՝ ընդունելով, որ գեղեցիկ է.**

1. Չափավորն ու կարգավորվածը
2. Օգտակարն ու նպատակահարմարը
3. Միասնականն ու համամասնականը
4. Ներդաշնակն ու տիեզերականը

7 **Պնդումներից ո՞րն է ճիշտ.**

1. Կա արվեստի դասակարգման մի ավանդական սկզբունք, ըստ որի արվեստները բաժանվում են երեք խմբի՝ տարածական, ժամանակային եւ գործնական։
2. «Մոդա» բառը ծագում է իտալերեն «մոդ» բառից, որն էլ իր հերթին գալիս է ֆրանսերեն «մոդուս» եզրույթից, որը նշանակում է չափ, եղանակ, կանոն։
3. Պարը, ըստ որոշ մտածողների, արվեստի տեսակներից բարձրագույնն է, քանի որ այն հնարավորություն է տալիս անմիջականորեն զգալ ներդաշնակությունը, վեհ-գեղեցիկն ու տիեզերական անսահմանությունը։
4. «Կինո» բառը ծագում է հունարեն «կինեո»՝ շարժել, շարժվել բառից։ Արվեստի այս տեսակն այսպես է կոչվել, քանի որ կինոյի գյուտարարներ Լյումիեր եղբայրներին հաջողվել է շարժել պատկերները՝ դրանց հաղորդելով կյանք։

8 **Նշվածներից ո՞րը պատժին ներկայացվող պահանջ չէ.**

1. Այն պետք է լինի տհաճ
2. Այն պետք է գործադրվի հիմնավորված
3. Այն պետք է գործադրվի կանոնների և նորմերի համաձայն
4. Այն պետք է գործադրվի ոչ իրավասու մարմնի կամ անհատի կողմից

9 **Նշվածներից ո՞րն է սխալ.**

Դավիթ Անհաղթը մարդու հոգին բաժանում էր երեք մասի՝ բանական, կամային /ցասմական/ և ցանկական, որոնցից յուրաքանչյուրն իր որոշակի առաքինությունն ունի: Դրանք են՝

1. Ազատություն
2. Խոհականություն
3. Արիություն
4. Ողջախոհություն

10 **Հին Հունաստանում «երջանկություն» բառը՝ էվդեմոնիա, բառացիորեն նշանակել է.**

1. Աստվածների հովանու տակ գտնվող մարդու երազանք
2. Աստվածների հովանու տակ գտնվող մարդու հաջողություն
3. Աստվածների հովանու տակ գտնվող մարդու կյանքի գերագույն նպատակ
4. Աստվածների հովանու տակ գտնվող մարդու ճակատագիր

11 **Ովքե՞ր են համարվում երրորդ հերթի ժառանգներ՝ ըստ օրենքի ժառանգության կատարման ժամանակ.**

1. Ժառանգատուի ծնողների եղբայրները և քույրերը /հորեղբայրները, հորաքույրերը, քեռիները, մորաքույրերը/
2. Ժառանգատուի հարազատ, համամայր կամ համահայր եղբայրները և քույրերը
3. Ժառանգատուի ինչպես հայրական, այնպես էլ մայրական կողմի պապը և տատը
4. Ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները

12 **Երեխայի անվան և /կամ/ ազգանվան փոխելը կարող է կատարվել երեխայի համաձայնությամբ, եթե.**

1. Լրացած է երեխայի 18 տարին
2. Լրացած է երեխայի 14 տարին
3. Լրացած է երեխայի 16 տարին
4. Լրացած է երեխայի 10 տարին

13 **Աշխատանքային օրերի միջև ընկած անընդմեջ հանգստի տևողությունը չի կարող պակաս լինել.**

1. 10 ժամից
2. 11 ժամից
3. 8 ժամից
4. 15 ժամից

14 **Պնդումներից ո՞րն է սխալ.**

1. Աշխատանքային պայմանագրերը, ըստ իրենց գործողության ժամկետի, լինում են որոշակի ժամկետով։
2. Գործատուն աշխատանքային հարաբերությունների այն մասնակիցն է, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա և /կամ/ օրենքով սահմանված կարգով օգտագործում է քաղաքացիների աշխատանքը։
3. Գործադուլը մեկ կամ մի քանի կազմակերպությունների աշխատողների կամ աշխատողների խմբի աշխատանքի ժամանակավոր դադարեցում է այն դեպքում, երբ կոլեկտիվ աշխատանքային վեճը հնարավոր չի եղել լուծել այլ կերպ։
4. Աշխատողն օրենքով սահմանված տարիքի հասած գործունակ քաղաքացին է, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա գործատուի օգտին կատարում է որոշակի աշխատանք՝ ըստ որոշակի մասնագիտության, որակավորման կամ պաշտոնի։

15 **Նշված մտածողներից ո՞վ է առաջարկել պետական իշխանությունը բաժանել երեք անկախ և իրար հակակշռող ճյուղերի՝ օրենսդիր, գործադիր և դատական.**

1. Վոլտեր
2. Ջոն Լոք
3. Շառլ Մոնտեսքիո
4. Ժան-Ժակ Ռուսո

16 **Նշվածներից ո՞րը պետության արտաքին քաղաքականության կառավարման գործադիր մարմին չէ.**

1. Հանրապետության նախագահ
2. Կառավարություն
3. Արտաքին գործերի նախարարություն
4. Ազգային ժողով

17 **Ո՞վ է «Հավերժական խաղաղություն» ծրագրի հեղինակը.**

1. Թոմաս Հոբս
2. Իմանուիլ Կանտ
3. Պոլ Հոլբախ
4. Կարլ ֆոն Կլաուզևից

18 **Շուկայական տնտեսությունում բարիքների բաշխման գործառույթը փոխանակման միջոցով իրականացնում են.**

1. Գործարարների միությունները
2. Սոցիալական ոլորտի աշխատողները
3. Ներդրումային ֆոնդերը
4. Գնորդներն ու վաճառողները

19 **Տարբերակներից ո՞րը արտադրության գործոն չէ.**

1. Աշխատանքը
2. Անհատը
3. Բնական ռեսուրսը
4. Կապիտալը

20 **Ստորև նշվածներից ո՞րն է բնորոշ շուկայական տնտեսությանը.**

1. Արտադրության ավանդական եղանակ
2. Գնագոյացումը իրականացվում է պետության կողմից
3. Ազատ մրցակցություն
4. Կենտրոնացված պլանային արտադրություն

21 **Ինչպե՞ս է կոչվում հողի օգտագործման դիմաց տրվող վճարը.**

1. Ռենտա
2. Տոկոս
3. Աշխատավարձ
4. Շահույթ

22 **Պահանջարկը կոչվում է առաձգական, եթե.**

1. Առաջարկի հետ հավասարակշռված է
2. Գնի տոկոսային փոփոխությունը հանգեցնում է պահանջարկի ավելի փոքր տոկոսային փոփոխության
3. Գնի և պահանջարկի փոփոխությունները հավասար են
4. Գնի տոկոսային փոփոխությունը հանգեցնում է պահանջարկի ավելի մեծ տոկոսային փոփոխության

23 **Գործազրկությունը, որը պայմանավորված է գիտատեխնիկական առաջընթացով՝ բնորոշ է.**

1. Սեզոնային գործազրկությանը
2. Ֆրիկցիոն գործազրկությանը
3. Կառուցվածքային գործազրկությանը
4. Պարբերաշրջանային գործազրկությանը

24 **Ստորև նշվածներից, ո՞րը տնտեսական բարիք չէ.**

1. Համացանց
2. Հեծանիվ
3. Հեռուստացույց
4. Մակընթացություն

25 **Պնդումներից ո՞րն է սխալ.**

1. Կենտրոնական բանկի միջոցով կարգավորվում է դրամաշրջանառությունը
2. Պետական բյուջեն կազմում է օրենսդիր մարմինը
3. Արժույթը որևէ երկրի միջազգայնորեն ճանաչված դրամական միջոցն է
4. Երբ բյուջեյի ծախսերը գերազանցում են եկամուտները առաջանում է բյուջեյի դեֆիցիտ

26 **Պնդումներից ո՞րն է սխալ.**

1. Պահանջարկը զնողունակ պահանջմունքն է
2. Փողը փոխանակման միջոց է
3. Տնտեսագիտության «հայրը» Ադամ Սմիթն է
4. ՀՆԱ-ն պետական ծախսերի հանրագումարն է

27 **Այս տեսության կողմնակից փիլիսոփաները ասում են, որ Աստված իրական է, և իրականությունն էլ Աստված: Ի՞նչ անունով է հայտնի այս տեսությունը.**

1. ագնոստիցիզմ
2. մոնոթեիզմ
3. աթեիզմ
4. պանթեիզմ

28 **Ֆրենսիս Բեկոնի կարծիքով՝ կան չորս կուռքեր և մոլորություններ, որոնք մարդուն խանգարում են ձեռք բերել ճշմարիտ գիտելիքներ: Նշվածներից ո՞րը Բեկոնի ներկայացրած քառյակում չկա.**

1. հրապարակի
2. թատրոնի
3. կինոյի
4. քարանձավի

29 **Փիլիսոփայության մեջ, ո՞րը ճշմարտության մասին երեք հիմնական տեսությունների մեջ չի մտնում**

1. ռեալիզմի
2. համապատասխանության
3. կոներենտության
4. պրագմատիկ

30 **Նշվածներից, ո՞րը չի մտնում Դավիթ Անհաղթի տված փիլիսոփայության վեց սահմանումների մեջ**

1. փիլիսոփայությունը գիտությունների գիտությունն է և արվեստների արվեստը
2. փիլիսոփայությունը գիտությունների թագուհին է
3. փիլիսոփայությունը սեր է առ իմաստություն
4. փիլիսոփայությունը մտածմունք է մահվան մասին

31 **«Մարդը գիտելիքներով չի ծնվում, այլ իր նպատակամղված գործունեության՝ ուսման, սովորելու շնորհիվ է ձեռք բերում գիտելիքներ»: Ո՞վ է մտքի հեղինակը**

1. Կոնֆուցիոս
2. Դավիթ Անհաղթ
3. Ֆրիդրիխ Նիցշե
4. Իմանուիլ Կանտ

32 **Ի՞նչ համակարգ է ձևավորվում լեզվի, մշակույթի, կրոնի և այլ բաղադրիչների հիման վրա. նշեք ճիշտ տարբերակը:**

1. Սոցիալական համակեցություն
2. Մարդկային համակեցություն
3. Ազգային ինքնություն
4. Համայնք

33 **Ինչպե՞ս է կոչվում Ֆրանսիայի Հանրապետության խորհրդարանը**

1. Համայնքների պալատ
2. Կոնգրես
3. Ծերակույտ
4. Ազգային ժողով

34 **Պնդումներից ո՞րն է սխալ**

1. Շառլ Մոնտեսքյոն նախապատվությունը տալիս էր կառավարման հանրապետական ձևին
2. Իշխանությունների տարանջատման և հավասարկշռման սկզբունքը ժողովրդավարության հիմքերից մեկն է
3. Դատական և օրենսդիր իշխանությունները անկախ են, բայց որոշ դեպքերում գործադիր իշխանությունը՝ կառավարությունը կարող է փոխարինել դրանց
4. Յուրաքանչյուր իրավական երկրում գործում է Սահմանդրական դատարան, որը քննարկում է օրենքներն ու որոշում դրանց համապատասխանությունը Սահմանադրությանը

35 **Ըստ հոլանդացի փիլիսոփա և մշակութաբան Յոհան Հայզինգայի մարդկային մշակույթի ո՞ր դրսևորումն է ամենահինը**

1. Աշխատանք
2. Սեր
3. Խաղ
4. Առևտուր

36 **Ստեղծագործականությունից և անհատականությունից զուրկ ու սպառողականության հիմքի վրա գոյություն ունեցող հասարակությունները կոչվում են**

1. Տեղեկատվական հասարակություն
2. Ամբոխ
3. Զանգվածային հասարակություն
4. Գլոբալ ինքնությամբ հասարակություն

37 **Ո՞վ է «գեղեցկություն» բառը բացատրել հետևյալ կերպ.**
«Գեղեցկություն» բառը որտեղ և ինչպես էլ գործածվի, նշանակում է հատկանիշներ, որոնց շնորհիվ մենք սիրում ենք իրը, հիանում դրանով կամ ձգտում դրան»:

1. Դենի Դիդրո
2. Ռոբին Ջորջ Քոլլինգվուդ
3. Դեյվիդ Հյում
4. Երվանդ Քոչար

38 **Սահմանափակ գործունակ անչափահասը գործարքներ կնքում է.**

1. չի կարող գործարք կնքել
2. ինքնուրույն
3. օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ
4. դատարանի վճռով

39 **Պետության խնդիրները և գործառույթները**.

1. ճիշտ պատասխանը բացակայում է
2. նույնական են
3. փոխկապակցված են
4. քարացած են

40 **Ստորեւ նշված են մեջբերումներ ՀՀ Սահմանադրությունից, ընտրե՛ք ճիշտ պնդումը**

1. Օրենքները եւ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում Սահմանադրական դատարանի վճռից հետո:
2. Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են գաղափարախոսությունները եւ բազմակուսակցական համակարգը:
3. ՀՀ–ում մարդը բարձրագույն արժեք է:
4. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները ու պաշտոնատար անձիք իրավասու են կատարել այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են ժողովրդի կողմից:

41 **Ո՞ր երկրի Սահմանադրության նախաբանում է ներառված հետեւյալ միտքը. «...բազմազգ միասնական պետություն է՝ կազմված իր ժողովրդի բոլոր ազգություններից: Հաստատված են սոցիալիստական հարաբերություններ՝ հավասարություն, միասնականություն ու փոխօգնություն, որոնք պետք է շարունակական լինեն ու գնալով ավելի ամրանան»:**

1. Ռուսաստանի Դաշնություն
2. Իրանի Իսլամական հանրապետություն
3. Ֆրանսիա
4. Չինաստանի Ժողովրդական հանրապետություն

42 **Ե՞րբ է ընդունվել «ՀՀ Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը**

1. 1996
2. 1993
3. 1994
4. 1995

43 **Կատարե՛լ համապատասխանեցում.**

ա. գանձվում է լայն սպառման բարիքների վաճառքից ու ծառայություններից՝ հարկման դրույքաչափ սահմանելու միջոցով, որը հանգեցնում է դրանց գների և սակագների բարձրացման:
բ. գանձվում է ոգելից խմիչքներից, ծխախոտից, նավթամթերքից և զարդեղենից
գ. սահմանվում է գույքի և եկամտի նկատմամբ
դ. պետական տարբեր ծառայությունների դիմաց տրվող վճարներ

1. ուղղակի հարկ
2. տուրքեր
3. անուղղակի հարկ
4. ակցիզային հարկ

1. ա-2, բ-3, գ-4, դ-1
2. ա-3, բ-4, գ-1, դ-2
3. ա-1, բ-2, գ-4, դ-3
4. ա-2, բ-4, գ-3, դ-1

44 **Կատարել համապատասխանեցում ըստ մտահանգման աստիճանների**

ա. Մեր շախմատիստը հաղթեց անցած 5 պարտիաներում, հետևաբար՝ կհաղթի նաև մնացած 4 պարտիաներում
բ. կարտոֆիլի գները աճում են, իսկ պահանջարկը նվազում է, հետևաբար՝ կարտոֆիլի վաճառքը կնվազի
գ. Արեգը մեծ է Ալենից, բայց փոքր է Ալեքսից, հետևաբար Ալենը փոքր է Ալեքսից
դ. Նա ով կանոնավոր գնում է եկեղեցի, խորապես հավատացյալ է
ե. վաղը շաբաթ է, հետևաբար անձրևելու է

1. չհիմնավորված եզրահանգում
2. թույլ հիմնավորված եզրահանգում
3. չափավոր հիմնավորված եզրահանգում
4. ուժեղ հիմնավորված եզրահանգում
5. դեդուկտիվ հիմնավորված եզրահանգում

1. ա-3, բ-5, գ-1, դ-2, ե-4
2. ա-1, բ-3, գ-4, դ-5, ե-2
3. ա-2, բ-4, գ-3, դ-1, ե-5
4. ա-2, բ-4, գ-5, դ-3, ե-1

45 **Ասույթները համապատասխանեցնել հեղինակներին**

ա/ «Ես գիտեմ, որ ոչինչ չգիտեմ»
բ/ «Իր մեջ փիլիսոփայություն պարունակող հոգին չի կարող իր առողջությամբ չհամակել և մարմինը»
գ/ «Գործել… գործել…Ահա այն, հանուն ինչի մենք գոյություն ունենք…»
դ/ «Փիլիսոփայությունը Աստծուն նմանվելն է ըստ մարդկային կարողության»

1. Սոկրատես
2. Յոհան Ֆիխտե
3. Միշել Մոնտեն
4. Դավիթ Անհաղթ

1. ա-1, բ-3, գ-2, դ-4
2. ա-1, բ-2, գ-3, դ-4
3. ա-2, բ-3, գ-4, դ-1
4. ա-4, բ-3, գ-1, դ-2

46 **Պնդումներից որո՞նք են սխալ**

1. Տեղեկատվական հասարակություն նշանակում է մի հասարակություն, որի կենսագործունեությունը մեծամասամբ կախված է տեղեկույթից։
2. Արժեքները մարդու կողմից գնահատվող, կարևորվող իրողություններն են։
3. Նյութական և հոգևոր բոլոր արժեքների ամբողջությունն ընդունված է անվանել արհեստ։
4. Պահանջմունքը՝ ոչ գնողունակ պահանջարկն է։
5. Հոգևոր արժեքները գաղափարներ են, սկզբունքներ, որոնք, որպես կանոն, հիմնվում են իդեալի հասկացության վրա։

47 **Կատարե՛լ համապատասխանեցում.**

ա. Այն սեփական սխալներն ընդունելու կարողությունն է, վարվեցողության, ապրելակերպի մեջ չափավորությունն ու զսպվածությունը, շրջապատի հետ հարաբերություններում հավասարակշռված լինելը։
բ. Այն ողջամիտ, զուսպ, կշռադատված, խոհեմ լինելու կարողությունն է։
գ. Այն հավատի արժանի, վստահելի, իր պարտքին, իր խոսքին նվիրված, անդավաճան լինելու հատկությունն է։
դ. Այն սեր և խնամք դրսևորելն է մերձավորի, զավակի, հարազատի, ծնողի, հիվանդի, թույլի, տկարի, բնության նկատմամբ։
ե. Այն հույս ներշնչելու, կայուն, կամային, ուժեղ լինելու ունակությունն է։

1. Հավատարմություն
2. Համեստություն
3. Հուսալիություն
4. Հավասարակշռություն
5. Հոգատարություն

1. ա-2, բ-4, գ-3, դ-5, ե-1
2. ա-4, բ-2, գ-1, դ-3, ե-5
3. ա-2, բ-4, գ-1, դ-5, ե-3
4. ա-4, բ-3, գ-2, դ-1, ե-5

48 **Կատերե՛լ համապատասխանեցում.**

ա. «Որքան մարդը բարի է, այնքան ավելի շատ է ուրիշների մեջ բարություն տեսնում»։
բ. «Խիղճը հաշվեպահպան ոստիկան է, որն իբրև դատավոր սրտի աթոռի վրա բազմած խայթահարում է միշտ»։
գ. «Ամենաերջանիկ մարդը նա է, ով երջանկություն է պարգևում մեծ թվով մարդկանց»։
դ. «Ամոթն արգելում է այն, ինչն արգելված չէ օրենքով»։
ե. «Ոչ մի վատ բան մի՛ խոսիր կամ արա, նույնիսկ եթե միայնակ ես»։

1. Դենի Դիդրո
2. Խրիմյան Հայրիկ
3. Բլեզ Պասկալ
4. Դեմոկրիտ
5. Սենեկա

1. ա-2, բ-4, գ-3, դ-5, ե-1
2. ա-4, բ-2, գ-5, դ-3, ե-1
3. ա-3, բ-2, գ-1, դ-4, ե-5
4. ա-3, բ-2, գ-1, դ-5, ե-4

49 **Աշխատությունը համապատասխանեցնել հեղինակի անվան հետ.**

ա. «Հասարակական դաշինք»
բ. «Հուշեր Սոլֆերինոյի մասին»
գ. «Պատերազմի մասին»
դ. «Պատերազմների մասին»

1. Կարլ Ֆոն Կլաուզևից
2. Պոլ Հոլբախ
3. Ժան-Ժակ Ռուսո
4. Անրի Դյունան

1. ա-2, բ-4, գ-3, դ-1
2. ա-4, բ-2, գ-1, դ-3
3. ա-3, բ-4, գ-1, դ-2
4. ա-3, բ-2, գ-1, դ-4

50 **Կատարե՛լ համապատասխանեցում:**

ա. Տարածքային հիմունքներով կազմված մեկ միասնական հանրույթ
բ. Մարդկության կամ ազգի նյութական և հոգևոր արժեքների ամբողջություն
գ. Լեզվական, մշակութային և կրոնական ընդհանրություններով էթնիկական խումբ
դ. Համագործակցության, հանդուրժողականության և փոխլրացման հիմքով միջավայր

1. Համակեցություն
2. Ազգ
3. Մշակույթ
4. Համայնք

1. ա-3, բ-4, գ-1, դ-2
2. ա-4, բ-2, գ-1, դ-3
3. ա-3, բ-4, գ-2, դ-1
4. ա-4, բ-3, գ-2, դ-1

51 **Հետազոտության ինդուկտիվ մեթոդի հաջորդական քայլերը դասավորեք ըստ հերթականության:**

ա. Վերլուծել տվյալները և առաջադրել վարկածներ
բ. Վերանայել վարկածները
գ. Փորձի միջոցով ստուգել վարկածները
դ. Հավաքել տվյալներ, փաստեր
ե. Կատարել ընդհանրացումներ, դուրս բերել կանոններ

1. դ, ա, բ, գ, ե
2. դ, ա, գ, ե, բ
3. դ, ա, գ, բ, ե
4. դ, ա, ե, բ, գ

52 **Ասույթները համապատասխանեցնել հեղինակներին**

1. Գործարարությունը պատերազմ է։
2. Այն ինչ շահավետ է հացթուխին, վնասաբեր է գնորդին
3. Ջուրն ավելի մեծ օգտակարություն ունի ադամանդի համեմատությամբ, բայց ինչու՞ է ջրի գինն ավելի ցածր ադամանդի գնից։
4. Սեփականության կտրուկ անհավասարությունը պետության հավասարակշռության համար վտանգավոր է։

Ա. Արիստոտել
Բ. Մ. Մոնտեն
Գ. Թ. Թյորներ
Դ. Ա. Սմիթ

1. ա-2, բ-3, գ-4, դ-1
2. ա-4, բ-1, գ-2, դ-3,
3. ա-4, բ–2, գ-1, դ–3
4. ա-3, բ-4, գ-2, դ-1

53 **Բերված օրինակները համապատասխանեցրեք մտահանգման աստիճանների հետ**

ա. Նա հաճախակի խաբել է ինձ։ Հետևաբար՝ նա ազնիվ մարդ չէ
բ. Բամբակի գները նվազում են, իսկ պահանջարկը մեծանում է, հետևաբար՝ բամբակի վաճառքը կաճի
գ. Այսօր կիրակի է, հետևաբար՝ այսօր անձրևելու է
դ. Բենզինի գները կտրուկ աճում են, հետևաբար՝ բենզինի սպառումը կտրուկ կնվազի
ե. Երեկ անձրևեց, հետևաբար՝ այսօր էլ է անձրևելու

1. Թույլ հիմնավորված եզրահանգում
2. Չհիմնավորված եզրահանգում
3. Չափավոր հիմնավորված եզրահանգում
4. Դեդուկտիվ հիմնավորված եզրահանգում
5. Ուժեղ հիմնավորված եզրահանգում

1. ա-5, բ-4, գ-1, դ-3, ե-2
2. ա-4, բ-5, գ-1, դ-3, ե-2
3. ա-4, բ-5, գ-2, դ-3, ե-1
4. ա-5, բ-4, գ-2, դ-3, ե-1

54 **Ընտրե՛լ սխալ պնդումները.**

1. Պետության իրավական գործառույթը ենթադրում է՝ օրենսդրության ստեղծում, մարդու իրավունքների ամրագրում, ապահովում, պաշտպանություն, իրավախախտների բացահայտում և պատասխանատվության ենթարկում։
2. Պետության տնտեսական գործառույթը ենթադրում է՝ մարդու արժանապատիվ կյանքի համար պայմանների ապահովում, առողջապահության, հանգստի, կրթության, բնակարանային շինարարության և այլ ոլորտներում ծրագրերի մշակում և կենսագործում։
3. Պետության բնապահպանական գործառույթը ենթադրում է՝ մարդու կյանքի համար անվտանգ բնական պայմանների ապահովում, շրջակա միջավայրի պահպանություն, վերականգնում և բարելավում, բնական ռեսուրսների պահպանության և ռացիոնալ օգտագործման ապահովում։
4. Պետության սոցիալական գործառույթը ենթադրում է՝ տնտեսության կարգավորում, պետբյուջեի ձևավորում և կատարման վերահսկողություն, տնտեսական զարգացման ծրագրերի մշակում, ձեռնարկատիրության համար նպաստավոր պայմանների ստեղծում և այլն։
5. Պետության կրթամշակութային գործառույթը ենթադրում է՝ ազգային ինքնագիտակցության զարգացում, կրթության համընդհանուր և անընդհատ համակարգի կազմակերպում, գիտության և մշակույթի զարգացման օժանդակում, ժողովրդի մշակութային ժառանգության պահպանություն։

55 **Ընտրել ճիշտ պնդումները**

1. Անձին համաներել կարող են Սահմանադրական դատարանի որոշմամբ կամ նախագահի հրամանով։
2. Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք
3. Արգելվում է մարդուն, իր կամքին հակառակ ենթարկել հոգեբանական հետազոտության
4. Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել կյանքից։
5. Յուրանչյուր ոք ունի ֆիզիկական, սոցիալական եւ հոգեբանական անձեռնմխելիության իրավունք։

56 **Ընտրե՛լ սխալ պնդումները.**

1. Ըստ որոշումների ընդունման եղանակի պետական մարմինները լինում են կենտրոնական և տեղական։
2. Պետական հարկադրանքն ունի կամայական, հայեցողական բնույթ։
3. Իրավական հարկադրանքը ազատության օրինական սահմանափակումն է ուժային ճնշման ճանապարհով։
4. Պետության գործառույթները ոչ թե քարացած, այլ շարժուն երևույթներ են։
5. Պետաքաղաքական վարչաձևի տեսակները երկուսն են՝ ժողովրդավարական և հակաժողովրդավարական։

57 **Կատարե՛լ համապատասխանեցում.**

ա. Նորմեր, որոնք նախատեսում են պետական հարկադրանքի ազդեցության միջոցներ իրավախախտման համար։
բ. Նորմեր, որոնք նախատեսում են իրավահարաբերության մասնակիցների իրավունքները և պարտականությունները։
գ. Նորմեր, որոնք հնարավորություն են տալիս կատարելու որոշակի դրական գործողություններ՝ երաշխավորված մյուս անձանց որոշակի պարտականություններով։
դ. Նորմեր, որոնք սահմանում են պահանջվող վարքագիծ։
ե. Նորմեր, որոնք պարտադրում են իրավահարաբերության մասնակիցներին չկատարել արգելված գործողությունը՝ սահմանելով նաև սանկցիան։

1. Իրավազորող
2. Իրավապահպան
3. Արգելող
4. Կարգավորիչ
5. Պարտադրող

1. ա-5, բ-2, գ-3, դ-4, ե-1
2. ա-2, բ-4, գ-3, դ-1, ե-5
3. ա-4, բ-1, գ-3, դ-2, ե-5
4. ա-2, բ-4, գ-1, դ-5, ե-3

58 **Ընտրե՛լ սխալ պնդումները.**

1. Պետության իրավական գործառույթը ենթադրում է՝ օրենսդրության ստեղծում, մարդու իրավունքների ամրագրում, ապահովում, պաշտպանություն, իրավախախտների բացահայտում և պատասխանատվության ենթարկում։
2. Պետության տնտեսական գործառույթը ենթադրում է՝ մարդու արժանապատիվ կյանքի համար պայմանների ապահովում, առողջապահության, հանգստի, կրթության, բնակարանային շինարարության և այլ ոլորտներում ծրագրերի մշակում և կենսագործում։
3. Պետության բնապահպանական գործառույթը ենթադրում է՝ մարդու կյանքի համար անվտանգ բնական պայմանների ապահովում, շրջակա միջավայրի պահպանություն, վերականգնում և բարելավում, բնական ռեսուրսների պահպանության և ռացիոնալ օգտագործման ապահովում։
4. Պետության սոցիալական գործառույթը ենթադրում է՝ տնտեսության կարգավորում, պետբյուջեի ձևավորում և կատարման վերահսկողություն, տնտեսական զարգացման ծրագրերի մշակում, ձեռնարկատիրության համար նպաստավոր պայմանների ստեղծում և այլն։
5. Պետության կրթամշակութային գործառույթը ենթադրում է՝ ազգային ինքնագիտակցության զարգացում, կրթության համընդհանուր և անընդհատ համակարգի կազմակերպում, գիտության և մշակույթի զարգացման օժանդակում, ժողովրդի մշակութային ժառանգության պահպանություն։

59 **Ընտրե՛ք ճիշտ պնդումները.**

1. Ամենամյա արձակուրդն օրերով հաշվարկվող ժամանակահատված է, որը տրամադրվում է աշխատողին։ Այդ ընթացքում պահպանվում է նրա աշխատատեղը /պաշտոնը/, վճարվում է միջին աշխատավարձ։
2. Հանգստանալու և սնվելու համար ընդմիջումը աշխատողին տրամադրվում է աշխատանքային օրվա կեսին, սակայն ոչ ուշ, քան աշխատանքը սկսելուց չորս ժամ հետո /երկու ժամից ոչ ավելի և կես ժամից ոչ պակաս տևողությամբ/։ Աշխատողը չի կարող ընդմիջմանը բացակայել աշխատավայրից։
3. Աշխատանքային օրվա ընթացքում հանգստանալու լրացուցիչ ընդմիջումները տրամադրվում են մինչև 16 տարեկան աշխատողներին՝ նվազագույնը 30 րոպե, իսկ հատուկ ընդմիջումները՝ հատուկ պայմաններում /օրինակ՝ մտավոր հուզական գերլարված վիճակում/ աշխատողներին։
4. Աշխատանքային օրերի միջև ընկած անընդմեջ հանգիստի տևողությունը չի կարող պակաս լինել 8 ժամից։
5. Ամենշաբաթյա անընդմեջ հանգստի դեպքում ընդհանուր հանգստյան օրը կիրակին է, իսկ հինգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ նաև շաբաթը։

60 **Կատարե՛լ համապատասխանեցում.**

ա. Արվեստի այս տեսակի նպատակն է ստեղծել կենցաղի առարկաներ և ձևավորել մարդու միջավայրը գեղեցիկի կանոններով
բ. Այն հարթության վրա իրական աշխարհի պատկերումն է
գ. Այն երաժշտության «արձագանքն» է, ռիթմիկ մեղեդու ազդեցությամբ մարդկային մարմնի շարժումների ամբողջությունը
դ. Այն իրականության գեղարվեստական վերարտադրումն է խոսքի միջոցով
ե. Այն արվեստի այնպիսի տեսակ է, որում աշխարհի գեղարվեստական յուրացումն իրականացվում է բեմական գործողության միջոցով

1. Պար
2. Թատրոն
3. Դեկորատիվ-կիրառական արվեստ
4. Գեղանկարչություն
5. Գրականություն

1. ա-2, բ-3, գ-4, դ-1, ե-5
2. ա-4, բ-1, գ-2, դ-5, ե-3
3. ա-3, բ-4, գ-1, դ-5, ե-2
4. ա-3, բ-4, գ-2, դ-5, ե-1